ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 10 >> << Հունվար >> 2019թ. N 01-2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի ներքին աուդիտի հաստատված տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 5՝ <<Խանջյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արմավիրի թիվ 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արտիմետի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2016, 2017, 2018 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ և <<Դաշտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2018 թվականի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 16 աշխատանքային օրյա ժամկետում:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 10.01.2019 14:01:21 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

ՄԱՐԶՊԵՏ՝
Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am